

Զ Ո Ր Ա Գ Լ Խ Ի Ն

(Պատկերներ գիտից)

I

Գիւղաքաղաքի մէջ խճուղին ինչպէս միշտ, այդ օր էլ քարուքանդ էր ու ցեխոտ: Սակայն, երբ մտնում էր նա դաշտերի կուրծքը, որպէս սպիտակ լայն ժապավէն՝ ձգւում էր մինչև հորիզոնը և այնտեղից ոլորապտոյտ մազցում, հասնելու համար լեռնաշղթայի ամենաբարձր գագաթին:

Խոխոջուն վտակի կողքին բանակած պահակազուն-դը երաժշտութեամբ էր զբաղուած. շեփորների անախորժ ու խառն ի խուռն ձայնը՝ միացած սրնգի սուր ել-կէջներին՝ ստիպեց մեզ արագացնելու սայլի զնացքը: Իսկ երբ անցել էինք աւելի հեռու, Գէորգը կպաւ սայլապանի թևին ու ասաց:

— Հանդարտ քշիր...

Հրճւում էին հիւրերս մեր առջևը պարզուող շքեղ տեսարանով: Չէինք խօսում, այլ լի թոքերով շնչում էինք թարմ օդը և անհամար ծաղիկներից ելնող բուրմունքը:

Այլ կողմից արտերը իրանց ծայրերով հասնում էին մինչև անտառոտ լեռների ստորոտը, ձախ կողմից՝ գնում էին նրանք ոստնելու Քարկողի անդնդախոր ձորի վրայով և շարունակում գոգաձև՝ կանաչ սփռելու մինչև հեռաւոր լեռկ ու ձիւնազագաթ շղթաները:

Երփներանգ, անհամար ծաղիկներ բծաւորում էին հարթավայրը. — կապոյտ զանգակիկների խոնարհած զը-

լուխներ շերտեր էին գծում, մանր-դեղին փնջաւոր ծաղիկներ խառնուած մարգի կանաչին՝ կապոյտ ստուեր տարածում, իսկ հեռուն՝ կարմրին էին տալիս խիտ պրսակներով լեցուն վիշապուկները, պսպղում արեան մեծ բծերի նման:

Դաշտն ամբողջ ծփում-օրօրում էր մեղմ քամու տակ, նազելի և գողտրիկ: Կարծես կանաչ կոհակներ լինէին, որ պարբերաբար ելնում-իջնում էին՝ մէկ տերևների փայլուն, մէկ անփայլ երեսներն ի ցոյց հանելով:

Անցնում էինք այդ բոլորի միջով. սայլապանը գլխարկը ծռել՝ երգ էր մրմուռում քթի տակից, Յակովբը շնչում էր, շառաչելունով շնչում, Գէորգը գլխարկը հանել՝ ժպտում էր բնութեան, ժպտում գեփիւռին...

Սրև չկար. երեսը ամպերով ծածկուած, ձիւնոտ լեռներից սահող հեղիկ քամիին էր թողել լեռնադաշտը: Արտերի դուրալի շուկը, թռչունների հեռաւոր ճուղիւնը, ջրերի մէկ-մէկ լսուող կարկաչը միմեանց ձայնառու, միմեանց լրացնելով՝ ներդաշնակում էին այնքան հաճոյալից, որքան և սիրուն էր շրջապատող լեռն ու դաշտը, ձորն ու բլուրները:

Բայց հագիւ գորշ խորքի վրայ սկսել էր գծուել հայկական մի հին ամբողջ տխուր աւերակների կոյտը, հագիւ ամեն աղմուկից հեռու՝ միայն բնութեան ձայնն էր մեր ականջին հասնում, որ յանկարծ մեր ետևից լսուեց նախ խուլ, ապա բարձր շառաչ, որ գնալով մեծանում էր ու գալիս—մօտենում:

Սայլ էր, ահագին դրդոցով թաւալող մի մեծ սայլ (գրոգ), որ չորս կատաղի ձիերով սրարշաւ գալիս էր՝ աւագի, խճի և քարերի շատրուան ցայտեցնելով շուրջը:

Լցուած էր նա բերնէ բերան՝ գիւղացիներով, որոնք կոկորդ պատռելու չափ գոռում էին, աղմկում, ձեռքեր ու ոտներ ցնցում օդի մէջ, ելնում-նստում էին, միմեանց վրայ ընկնում...

—Ի՞նչ է այն, գոչեց Յակովբը զարմացած:

—Մեր գիւղացիք են, բացատրեց սայլապանը, որ

կանգնել ետ էր նայում—բաս է՛ն ա, պրծած կըլեն, որ ըտէնց ուրախութիւնով են տուն գնում:

—Դուզանցիք են:

—Հրամանք ես. ծաղկասարեցոց հետ սպոր 1) կար... կը գիտենանք—էսօր էր ըրազըրը... 2) լաւ կոնծել են. բաս յաղթած կըլեն...

Մինչ այդ, մօտեցող սայլի մէջ սկսել էի նկատել յերաւի մեր գիւղից ծանօթ դէմքեր: Նախ՝ երկարավիզ Գէվօին տեսայ, յետոյ Գրիշօենց Մուկուչին, ապա Խոլերայի դէմքը երևան եկաւ, կամաց-կամաց՝ նորընտիր քեօխվէն, երեսփոխը. Յաբէթ աղայի որդին—«կչկչան Նիկոլն» էլ կար մինչև իսկ:

Սայլը վարում էր կաղլիկ Ջաւաղը, որ անխնայ մտրակում էր ձիերին, ոտները ցցում, գոռում էր և քիչ էր մնում գետին գլորէր կողքին նստած ալիւրոտ Ջաբէին:

Ձիերը սըրնթաց, կատաղի վաղքով ցնցում էին մեծ, խարխուլ արկղի նմանող սայլը, որ ոստնում էր, աջ ու ձախ թեքում և քարի մանր խիճերով՝ սլաքների նման շամիրում աջ ու ձախ:

Նկատեցին մեզ և ճանաչեցին երևի: Կարմրամազ Սմբատը, բանից երևաց որ մէջն էր—կառքի խորքումը կուչ եկած և վիզը փորը ձգած: Ահա և վիզն ածիլած պայտար Խէչօն. նստել էլ սայլի կողի վրայ և այժմ կանգնած՝ ձեռքով ինչ որ շարժումներ էր գծում օդի մէջ:

Գոռում էին, բայց կառքի դըրդոցը խանգարում էր մեզ մի բառ իսկ հասկանալու:

—Հայ—հայ... լաւում էր միայն:

—Դժուել են, տօ, գոչեց Յակովբը—աղան, մեր դուքին քիչ դէնը տար՝ թէ չէ շուռ կը տան:

—Հայ—հայ, եկանք հա...

Ու Ջաւաղը, երբ մօտենում էին, բոլորովին ետ

1) Վէճ. 2) Դատավարութիւն.

պառկելով՝ քաշեց սանձերը, ճգնեց կառքը կանգնեցնելու:

— Էդ ո՛ւր բարին... լսուեց թէչօի ձայնը:

— Տպո՛՛ւ... այ ես ձեր... տպուու տօ է է... փիէ, էս շան ապրանքները կամողել են... տպո՛՛ւ...

Կանգնեցրին կառքը ճիշտ մերինի կողքին:

— Բարո՛վ, բարո՛վ... ձայնեցին ամեն կողմից զուարթութեամբ—համեցէք մե՛զ հետ... նստէք մեզ հետ...

Արբած էին գրեթէ բոլորը, բացի թուրայից և երեցփոխից: Ու լաւ հարբած: Դուզանցին, այն էլ խումբով, գիւղաքաղաք գնար և լուրջ, առանց հարբելու վերադառնար—անսովոր բան կը լինէր:

— Տեսնո՞ւմ էք, հրճուեց Գէորգը—կոնծել են ամենքը:

— Էդ ի՛նչ խաբար է խմբով, հարցրի ես—ի՛նչ կայ, որ բազմութեամբ, այսպէս գործի օր՝ գիւղաքաղաք էիք եկել:

— Գործ ունէինք, գործ... րազըո՛ր, ¹⁾ միւրավոյ պասրէղնի՛ւ... ²⁾ լսուեցին խառն ի խառն ձայներ:

Ամենքն էին խօսում: Եւ խօսքերի հետ խառն՝ ծիծաղներ, աղաղակներ:

— Նստէք, եկէք մե՛զ հետ նստէք...

— Ադա՛ գէ, տեղ ո՛րդիան ա, որ կանչում էք...

— Տօ իրանք հրէն պակաս սայլ ունին, գիժ խօ չէ՛ն որ ըստեղ գան...

— Ընչի՛, թող մե՛զ հետ նստեն...

Բայց մենք տեղներիցս չշարժուեցինք:

— Ձեզ հետ կը գանք, դուք քշէք...

— Հա՛, ըտէնց լաւ ա, պարոններ, խորհուրդ տուաւ Երեցփոխը—հրէն ձորագլխին ցած կիջնենք, ընտեղ կը խօսանք...

— Քշիր տօ, Ջաւադ, ճչաց թուրան:

¹⁾ Դատավարութիւն. ²⁾ Հաշտարար դատաւորի փոխանորդ գիւղաքաղաքում. վարում է դատական գործերը:

Ու երբ կաղլիկը մտրակում էր, աչքս ընկաւ սայլի խորքին: Ջարմացած նկատեցի մի ինչ որ սև երկար բան, որ անշարժ փոռած էր այնտեղ. քիչ էր մնում գիւղացիք իրանց ոտները նրան կռթնեցնէին:

— Դա ինչ է, հարց տուի և զլսով ակնարկեցի:

— Սո՛ւղիան ա, սուղիա՞ն... ¹⁾ օճնաց խէչօն:

Կառքը շարժուել էր տեղիցը:

— Դա ի՞նչ է եղել, յաջողուեց ինձ հարցնել նշաններով, երբ սայլը դրդիւնով սրանում էր:

Այս անգամ Ջաւաղն էր, որ քրքիջը բերնին, իր զիւ ձայնով հասկացրեց ինձ.

— Հանրած ա, հարբած...

Ու անցան: Գինու շոգիների ազդեցութեան տակ՝ Ջաւաղն աւելի կատաղօրէն մտրակեց ձիերին. ահագին ցնցումներով և խճային շատրուանի մէջ՝ կառքը սլացաւ առաջ:

Ստիպուած էինք բաւական հեռու բռնել մեզ այդ սանձարձակ արշաւանքից: Ետ մնացած՝ ամեն ըրպէս պատում էինք թէ ահա սայլի միջից դուրս պիտի ուտնէին շախշախուելու՝ վիզն ածիլած խէչօն և կշկշան նիկոլը, որոնք թէ միմեանց և թէ կողերին էին կառչել:

Բայց Ջաւաղը վարպետ քշող էր. չնայելով իր իսկ ցնցումներին, սուր աղաղակներին—նրան յաջողուեց զնալ մինչև ձորաբերանը, ուր նա դուրս ելաւ խճուղուց, կատարելապէս մէջքի վրայ պառկելու չափ ետ կռացած քաշեց սանձերը, ճչաց, կանչեց և մի կիսաշրջան գործել տալուց յետոյ՝ ձիերին կանգնեցրեց ձորի ամենամօտ ափի կանաչ հարթութեան վրայ:

Մինչև մեր հասնելը, բոլորը դուրս էին եկել սայլից, նստել նրա կողքին, զինու մի փոքրիկ տիկ, օդու մի մեծ շիշ դրել կողքերին, հացն ու պանիրը պարզել՝ սկսել էին քէֆի:

¹⁾ Գիւղական դատաւոր, որ լինում է ընտրութեամբ:

Սուղիային թողել էին սայլի մէջ՝ երեսի վրայ փր-
ռուած ու խոկալով:

Հրաւիրեցին մեզ: Հետաքրքիր էր իմանալ թէ ի՞նչ
անելու էին գնացել իրանց քեօխվայի, քէհեաների և
սուղիայի հետ, թէ ինչո՞ւ այդքան լաւ տրամադրուած՝
այդտեղ էլ նստում էին քէֆը շարունակելու:

II

Ասեմք, ձորաբերանի այդ հարթութեան վրայ ան-
հնար էր չնստել, նոյնիսկ եթէ խմելու և քէֆի համար
չլինէր:

Լեռնադաշտի ամենաաքանչելի մի անկիւնն էր՝ իր
վայրենի տեսարանների հեռանկարով:

Ամեն գիւղաքաղաք գնալիս անշուշտ իջնում էի
այդտեղ և ժամերով կանգ առնում հսկայ ձորի կատա-
րին, լիզուած ապառաժների, հոսանուտ ժայռերի բար-
ձրութեան այդ կէտին՝ դիտելու համար ոտքերիս տակ
բացուող կրքոտ պատկերը:

Իէպի անդունդը պարզուող ապառաժի տակից, ու-
ղիղ ոտքերիդ առաջ՝ իջնում են կնճռոտ ու դաժան
լեռների շարքեր, որոնք կռթնած միապաղաղ ժայռերի,
գոգաւոր կողերով գնճում են ու գնում դէպի խորքը,
սեղմելու համար փրփուրը բերնին արշաւող գետակի
կողերը: Իւրաքանչիւր ճեղք, իւրաքանչիւր կնճիռ, ան-
դունդի եզրիցն սկսած՝ խռիւ մազերի նման դուրս է
ցցում իր խորշերից բազմատեսակ ծաղիկներ ու թփեր:
Նուրբ, աննման փափկութեամբ, գիշութեան մէջ ուռ-
ճացած բոյսերը դէզ առ դէզ կախուել են կամար կա-
պած ժայռերից դէպի վար. գեղնագոյն ծաղիկների փըն-
ջերը ոլորտուն, բաղեղածև զրկախառնուած սպիտակ
վարդենիների՝ սահում-շրջանակաւորում են լարծուն
ապառաժները: Աւելի վար, ստուերի մէջ գտնուող
ճախնուտը զբաւուած է մեծահասակ շուշաններով. հո-
սանուտ խճի երեսին, փետրային նրբութեամբ և թաւ-

շային փայլով՝ կանաչ սաւան են կապել սպիտակ բծերով զարդարուն մանրիկ ծաղիկներ: Եւ հուակ ուրեմն, այնտեղ—վարը, շատ խոր, ջրի հետ անմիջապէս խաղացող ափերի՝ երկարութեամբ, որպէս լայն երիզ՝ միապաղաղ հաւասարութեամբ մանրէական մամուռներ թափօր են կազմել՝ բաշը թոթուելով արշաւող գետակի երկու կողերին...

Եւ դիմացը, գետափից վեր, միմեանց վրայ գլուորուած ապառաժների թիկն տուել՝ վիթխարի զանգուածով ցցում է լեզուակաձև, միաձոյլ, խորշոմալից լեռը, որ գլուխ պտտեցնող գահաւանդներ է կազմում երեք կողմերից և գագաթին ունի հնամեայ մամուռ սւերակների մի տխուր կոյտ...

Այդտեղ էր որ Դուզանցիք նստեցին քէֆի:

Մեղմ եղանակը, մի քանի քայլ հեռուից դէպի անդունդն իջնող ջրվէժի կարկաչը, դալար կանաչութիւնն ու բաւական քանակութեամբ խմած գինին տրամադրել էր Ջաւադին երգելու:

Լաւ ձայն ունէր անսպիտանը. զօրեղ, կրծքային հուժկու տէնօր, որ թնդացնում էր շրջակայքը:

Վայրենի բնութեան նման նրա ձայնն էլ վայրենի, անմշակ թէև, բայց ունէր քաղցր շշտ և յաջող ձկունութիւն:

Ու երգում էր նա կանգնած՝ դէմքը ձորակին.—

Նպատակիս հասնիմ միայն,

Թող զիս հանեն կախաղան...

— Գինի լցրէք տօ... ձայնեց նա երբ վերջացրել էր և կարմրած՝ մեր կողմը դարձել—ղօնադիների համար գինի լցրէք...

—Այ ձայնդ անսպառ, այ դու շատ սպրիս, շան տղայ, գովեց նրան Խոլերան—լաւ ձէն ունիս, ես ու իմ Աստուածը, ամա փնւշ տղայ ես, փնւշ...

—Լաւ, ամի, ձէնդ կտրի թէ Աստուածդ կը սիրես. ի՞նչ վախտն ա Ջաւադին գովալը...

—Սուգիային ինչո՞ւ այնտեղ թողիք. հորցրեց Գէ-
որգը:

—Բա ի՞նչ անէինք. ծիծաղեց երէցփոխը—տնաշէնը
էնքան կոնծել ա, որ թօփ էլ տրաքացնես ականջի մօ-
տը՝ չի գարթնի...

—Թօփից չի գարթնի, սրախօսեց խէչօն—ամա որ
մէկ ըլամկա արաղ մօտացնես քթին՝ վեր կը թռնի...

—Ղորթ տօ՛, տղէ՛րք, մէջ մտաւ քեօխվէն—Սա
սկի լաւ բան չի որ անում ենք մենք: Եկէք սուգին
հանենք սէլիցը, գլուխը մէկ ցածի սառը ջրով լուանք...
Թէ չէ՛ ախր էս հալովը մենք ինչ գեղը տանենք նրան.
բա ամօթ չի, հը...

—Տօ ընչի՞ս ամօթն ա, քրքջաց կաւորամաղ Սըմ-
բատը—եանի առաջին անգամն ա...

—Չէ՛, քեօխվէն դրիստ ա ասում, տղէ՛րք. խօսեց
Խոլերան—մեր սուգիէն ա, ամօթ ա... Հանէ՛ք, մի քիչ
երես-մերեսը լուացէք, բեալքի ուշքի գայ:

—Հա՛, դրուստ ա. աւելացրին մի քանիսը և ոտքի
ելան—Թող տանեն ցած՝ քիչ ջրի տակին լուանանք գը-
լուխը:

—Ադա տեղներդ վեր ընկէք է՛է... ճչաց Նիկօլը—
ընչի՛, գինի եա արաղ շատ ունենք, որ նա էլօյաղուի¹⁾
ու գայ մեր կողքին նստի...

Մակայն ոտքի ելնող գիւղացիք չլսեցին նրան: Մօտ
գնացին սայլին, երկու հոգի ելան, սուգիային քաջջե-
լով իջեցրին, ալիւրոտ Ջաքարը բռնեց խոտերի վրայ
դրաւ և հրեսը դարձրեց:

—Տարէ՛ք, տարէ՛ք, ջրի մօտ տարէ՛ք. կանչեց Խո-
լերան—ա՛ Մուկուչ, բա էդքան խմե՛լ կրլի որ դու ես
խմում... հլա վօլօստնի սուղիա²⁾ էլ ես...

—Սուգիա, սուգիա... ցնցեց դատաւորին Ջաքարը,

¹⁾ Ուշքի գայ:

²⁾ Գիւղերի մի որոշ շրջանի դատաւոր:

Չանաց ուշքի բերել և կիսովին բարձրացնելով, գլուխը իր ծնկներին կռթնցրեց:

— Հը՛ր՛մ... լսուեց դատաւորի բերնիցը:

— Ուշքի՛ եկ, քո՛ տունը շինուի, հերիք չի քնես...

— Ադա ուր էք կանգնել, վեր կալէք ցած տարէք է՛է՛...

— Հը՛ր՛մ... դգ՛գ՛գ՛... փս՛ս՛ս՛. անում էր սուղինան:

Մի գիւղացի վճռական կերպով պազեց նրա առաջ, շալակեց, բարձրացաւ և ընդհանուր ծիծաղների մէջ՝ սկսեց ձորն իջեցնել արբածին:

— Մողայիթ³⁾ կացէք տճ... ձայնից նիկօլը— սուղին քլօլ չտաք ձորը, թէ չէ էլ կաշի քերթող չենք ունենալ...

Գէորգն ու Յակովբը զարմացած՝ նիկօլին նայեցին:

— Հա բնա... ժպտաց սա— գեղացին սկի կարանց եօլայ գնալ առանց կաշի քերթողի... մորթուած ոչխարին էլ վարպետ կաշի քերթող պտի՞, եա չէ...

— Ե՛ս էլ գնամ. ոտքի ելաւ Խէչօն այդ միջոցին— բեալքի արուն առնելու բան ըլի... Բեօխվա, էդ դանակդ մի դէսը քցի...

Եւ այսպէս էր ահա, որ երեք-չորս գիւղացիներ, դանակը ձեռքին բռնած Խէչօի հետ՝ սուղիային ձորն իջեցրին և շուտով մեր աչքերիցն անհետացան:

Քիչ ժամանակ էլ նրանց ծիծաղների և աղմուկների ձայնը հասնում էր մեր ականջին խորքից, յետոյ ամեն ինչ լռեց:

— Ամա՛ ջրի կը կապեն սուղի գլուխը հա... արեց Ձաւաղը:

— Տեսնո՞ւմ էք, դարձաւ մեզ երէցփոխը— էս էլ մեր սուղիան...

— Դորդ ա, խօսեց Խոլերան— խմող ա, ամա լաւ սուղիա ա... խելօք, վարճուող...

Ու սկսեցին խմել այնուհետև: Մպասում էի որ

³⁾ Ձգոյշ կացէք. հոգ տարէք:

Նիկօլը ուէ բան ասէր, բայց նա լուռ՝ օղի էր լեցնում
և չէր նայում մեզ:

— Խելօք... արեց երէցփոխը— դրուստ ա. որ խե-
լօք չըլի, ոսկոռների ծէրերը հնց կարայ պահի...

— Դ՞նչ ոսկոռներ. հարցրի ես:

— Ընէնց էլի... մումուաց Ջաւադը— ոսկոռներ...

— Լաւ դէ. կանչեց Սմբատը— էդ գինուցը դէս
տուէք պարոնների համար... էն ձի ա որ ոսկոռը չի
սիրում... Թէ խելօք ա՛ շոնդերը¹⁾ կը ծածկի որ միշտ
էլ ունենայ, .. Ադա Ջաւահր, ձէնդէլի մէկ գլուխդ քցի,
բեալքի Թէ քէֆը նորից չաղանայ...

Ջաւադը յիրաւի «ձէնը գլուխը քցեց» և երբ քիչ
յետոյ ձորն իջնող գիւղացիներից երեքն էլ եկան մեզ
միանալու, բաժակները երբէք դատարկ չէին մնում:

Կէսօրը բաւական անցել էր. գիւղացոց տրամա-
դրութիւնը հետգհետէ լաւանում էր. մոռանում էին
սուղիային. իսկ խմած օղին ու գինին այն աստիճան
ազդել էր, որ երգում էին, կանչում, գոռգոռալով վի-
ճում:

Խօսակցութիւնը դառնում էր ինչ որ հողաբաժին-
ների վրայ, որոնց մասին նրանք վէճի մէջ էին Ծաղ-
կասարեցոց հետ և որի համար էլ խմբովին գիւղաքա-
ղաք էին գնացել:

Բանից դուրս էր գալիս, որ Դուզանցիք վաղուց ի
վեր մտածում էին անտառների վերերում ընկած ըն-
դարձակ արօտատեղիները ազատել ծաղկասարեցոց ու-
նաձգութիւններից. անդատար, ամէ՛ն տարի կռիւ էին
տալիս նրանց հետ, ծեծում էին, ծեծ ուտում, աղմկում
և վերջ ի վերջոյ, այս տարի վէճը դատաստանի էին
ձգել:

— Շան որդիները.., կանչում էր Խոլերան— էս ա
30 տարի, քանի միտս ա, էդ չիմանլըը²⁾ մէ՛րն ա

¹⁾ Ծայրերը:

²⁾ Արօտատեղի. ²⁾ Յատակազիծ. մակարդակ:

ըլել. մե՛ր տաւարն ա ընտեղ արածել. հմի կանգնել էին թէ բա՛ «մե՛րն ա, դուք գո՛ղ էք, աւագակներ էք»...

—Տօ գո՛ղն էլ իրանք են ու աւագակներն էլ. ճչաց քեօխվէն—բա ինչի՛, ես մեռել եմ, որ ծաղկասարցիք մեր չիմանլըղը խլեն ու հլա մեր չօբաններին էլ ծեծեն... Այ, ըտէնց կանեմ հա... Տեսա՞ք, ա խալիւր, խօ տեսաք թէ ո՞նց պըրիտաւի մօտ նրանց բերանը փակեցի...

—Արա՛. ձայնեց Ջաքարը—բա էն մածունն ուտող Վարդօն էն ի՞նչ էր ասում... Ո՞նց եանի թէ մեր պլաւնը²⁾ սո՛ւտ ա, յետոյ ա շինած, թէ լիսնիչի³⁾ օգնականը կաշառք ա կերել...

—Տօ կարա՛ն, թող իրանք էլ ուտացնեն... Ընչի՛, կաշառքը եանի փի՛ն բան ա... Հրէն, հմի թող գան ու տենանք ո՞նց են գապթում հողերը...

—Տօ լաւ ենք արել, լաւ... գոռաց Ջաւաղը—հոգիներն էլ հանել ենք. հլա մէկ տես ես ո՞նց եմ մի քէֆ սարքելու լիսնիչի օգնականի համար...

Շատ հետաքրքրուում էին հիւրերս՝ իմանալու այդ այդ բոլոր խառօսի միջից ճշմարտութիւնը: Շատ էլ մաքուր չէր երևում գործը: Ըստ երևոյթին մեր գիւղացիք լաւ միջոցների չէին դիմել, թէև այժմ ցնծում էին իրանց սարած յաղթանակով:

—Ինչպէ՛ս է գործը. հարցրի ես— պատմեցէք, պարոններն էլ իմանան:

—Թող ես պատմեմ. բռնեց թևիցս Խոլերան:

—Թող քեօխվան պատմի. մէջ մտաւ Սմբատը:

Քեօխվան նախ մի բաժակ գինի կոնծեց, բխերը սրբեց, մի մեծ բրդուչ հաց ու պանիր կոխելով բերանը՝ թշերն ուռեցրեց և ուտելով՝ ասաց.

—Հըմ... հա, պատմեմ, ընչի՛ չէ... համ-համ...

—Տօ մէկ բերանիդը կուլ տուր հլա է՛. ծիծաղեց

3) Անտառապահ:

նրայ վրայ Ձաքարը—[սօ աջալա ¹) չի... էն ա ես սսեմ, էլի...

—Ձէ... ես...

Արեց քեօխվէն, մարմնի մեծ ցնցումով կուլ տուաւ բերնի եղածը և ասաց.

—Ըսէ՛նց... Հմի պատմեմ... Հն, ի՛նչ էի ասում...

Ամա դրուստ, հլա սկի բան էլ չեմ ասել... Տօ, կասես, հարբել եմ, հ՞ը... խմածս ի՛նչ էր որ. հարբելն ընէնց կըլի այ, ոնց որ սուգիէն ա... Հն, աղաներիս ասեմ որ, էդ շան տղերքը—Մաղկասարիցիք, մեր կողքին չիմանլըղ ունեն... միթամ թէ ²) քիչ ա գալիս, կամաց-կամաց վրայ են տալիս մինչի Կաթնաղբիւրը. մէկ էլ էն տենանք որ մեր չօբաններին ծեծում են թէ՛ մինչի Կաթնաղբիւրը իրանցն ա, մենք ի՛նչ իրաւունքով մեր տաւարները դէնն ենք արածացնում...

—Ադն, դրուստ որ հարբած ես. միջահատեց Խուրան—բա ըտէ՛նց կը պատմեն... ի՛նչի բաս չես ասում թէ 30 տարի ա էդ 17 դեսեատինը մե՛զ ա տուած, հլա մէկ վախտ էլ մեր քօչն ¹) էր ընդի...

—Դէ կասեմ էլի... Հն, ըտէնց ա, դորթ ա. մեր քօչն ընդի ա ըլել 30 տարի առաջ...

—Տօ չէ, չէ. գայրացաւ Խոլերան—երկու տարի առաջ չէր, որ քօչն ընդի էր... սօ մոռացել ես, քո տունն էլ ընդի չէր... բա ըտէ՛նց ես վկայութիւն տալու...

—Հն, տօ, դորթ որ մոռացել էի... Թամամ երկու տարի առաջ... ողորմածհոգի մէրս էլ հլա սաղ էր, էն տարին բժլ լօռ ²) շինեց ու կերանք ձմեռը... Հն, բան, Թամամ հինգ տարի առաջ... Հի՛նգ թէ երկու, ամի...

—Ը՛մ ես քո հարբած գլխիդ... արեց ուժգնութեամբ Խոլերան—լաւ ա, ձէնդ կտրի մէկ, թէ Աստուա-

¹) Շտապողական, ²) իբր թէ. ¹) Ամառը լեռ գնացող գիւղացիք, ²) Մօթալի նման մի պանիր, որ շինում են Թանից:

ծղ սիրես... ընէ՛նց կոնծել ա, որ մի՛տն էլ չի թէ քո-
չը երբ էր կաթնաղբիւրի մօտ...

— Դէ լաւ, ամի ամի. արեց Ջաւաղը չարախնդաց
— քեօխվա ա, դործ շալո ունի, որ մէկը միտը պահի...
Դէ ձեր քեօխվէն էլ էս ա էլի. ախպօրս չհաւանեցիք,
հմի սրա լազաթն առէք... Ոնց էր, քեօխվա— դարձաւ
նա հեգնութեամբ քեօխվին— ոնց էր... Հինգ տարի ա-
ռաջ, ողորմածնողի մէրդ բոլ լօռ շինեց... Ա՛յ, գտար
հա՛, մալաղէց, ³⁾ քեօխվա... Ա՛ռ, առ մէկ էս էլ կոն-
ծի, բեալքի հինգ տարին էահետ տասը շինես...

— Փո՛ւչ, փո՛ւչ... կանչեց նրա վրայ քեօխվէն— ըստեղ
էլ խօ գեղը չի՛. մէկ էլ տեսար պլէտը ⁴⁾ եկաւ հա՛ա...

— Լաւ ա, լաւ... քրքշաց Ջաւաղը— հրէն պլէտը
Մարտօի միկիտանումը ⁵⁾ վեր ընկած. դու գի՛նիդ խը-
միր, առ...

III

Մինչ այդ՝ խճուղու վրայ անցուղարձն աւելանում
էր: Անշուշտ ժամը 4-ը պիտի լինէր, որովհետեւ միմե-
անց ետևից, դղրդոցով անցան գիւղաքաղաքից երկաթու-
ղու կայարանը գնացող ամենօրեայ «պաղվող-ները» ⁶⁾
անցորդներով լեցուն:

Նրանցից յետոյ երևացին ու անցան օրօրուն՝ մեր
ետևում գտնուող «խախտլների» Ալէքսանդրովկա գիւղի
խոտաբարձ սայլերը, գիւղաքաղաքից զանազան գիւղեր
վերադարձող ձիաւորներ՝ բեռներով, եզան սայլեր ճրո-
ճաւով, այլև հետևակներ: Իսկ դէպի մեր կողմը, խճու-
ղուց իջնելով, երևացին երկու նոր գիւղացիներ:

— Փիէ... բացականչեց Ջաւաղը նկատելով նրանց
— Հիւ մտիկ տուէք մէկ... Տօ էն ծաղկասարցի Վար-
դօն չի մեր Յարութանց Ոսկանի հետը...

³⁾ Թուերէն բառ «կեցցես»:

⁴⁾ Մտրակ. ⁵⁾ Գինետուն. ⁶⁾ Մեծ սայլ՝ ձիերով լծած:

—Ի՞նչ Վարդօ, տօ. ասաց Նիկօյը—Հասարցի Մաթօն ա:

—Ձէ հան, խմածդ գլխիդ ա խփել... Վարդօն ա որ կայ. էն էլ, հրէ՛ն, Ոսկանն ա իր մեծ փափախովը:

—Վարդօն ա. հաստատեց Սմբատը—էն էլ Ոսկանն ա որ կայ... էս ֆնց ա ըլել որ իրար հետ են...

—Այդ ի՛նչ Վարդօ է, միջամտեցի ես—այն որ ասել է թէ ձեր պլանը կեղծ է և դուք լեանիչի օգնականին կանչառք էք կերցրել:

—Հան, հէնց էն ա. ասաց Ջաքարը—մածուն ուտող Վարդօն...

—Թող գայ մէկ է՛... ոտքի ելաւ քեօխվէն—մի-րավօյ պասրնդնիկի 2) առաջը չուգացի նրան մէկ լաւ ուշուց տամ... ըստեղ էլ խօ պրիցուտվէնի 3) տեղ չի՛...

—Ադան, ամօթ ա, մէջ մտաւ երէցփոխը—տեղդ նըստի, որդի. դօնաղը որ թշնամիդ էլ ըլի, պտի պատուես՝ երբ սուփրիդ վրայ ա գալիս...

—Տօ ի՛նչ պատուել, ի՛նչ դադ, բարկացաւ Ջաքարը—նա համ շունն ա, որ ասի թէ մեր պլանը սուտ ա ...

—Ես թէ չէ՛ մենք լեանիչին կաշառք ենք տուել... աւելացրեց Նիկօյը—որ ուտում առած, կարդացւոր ըլի, պտի մեր գլխին նստի՛...

—Ադան, կարդացւորս որն ա, ճչաց Ջաւաղը—քիչ ենք կարդացւորներ տեսել... ես թէ չէ հէնց մենք, պակաս կարդալ-գրել գիտենք...

—Տօ փո՛ւչ. կանչեց երէցփոխը նեղացած—քո դուշմանն ա, քեզ հետ հմի նա դա՛ւի ունի, դու աւելի պտի նրա հետ քաղաքավարի ըլես... լսողը ի՛նչ կ'ասի. տասը հողով, նամարդի պէս վրայ էք տալիս...

1) Մալուռուներ, որնցից կովկասում մի քանի գաղութներ կան. 2) դատաւոր. 3) Պետական պաշտօնատուն. աղաւաղած՝ պրիստուստվէնիյ բառից:

—Ղորդ ա ասում ամին, պնդեց Գրիշօենց Մուկուչը—մի անպատուէք ղօնաղին...

—Նստի, քեօխվան, ձայնեց երկարավիզ Գէվօն—
նստի, ամօթ ա. թող գալիս ա գայ. թէ ինքը ձէն չի տայ՝ դու էլ բան մի ասի...

Բայց քեօխվան, որ ելել և մի քայլ առաջ էր գնացել, չկարողանալով զսպել իրան, թէև չսկսեց հայհոյել, սակայն կանչեց հեռուից.

—էս եանի ձնց էլաւ, Վարդօ, որ սուտ պլան ունեցողները սուփրի վրէն ես գալիս...

Ու երկու ոտքի վրայ լարուած, աքաղաղի նման կոուրի հրաւէրը կարծես նետած, ձեռքերը մէջքին կանթեց և սպասեց որ եկողները մօտենային:

Վարդօն անշուշտ լսեց, հասկացաւ զրգոյիչ հրաւէրը, բայց լուռ՝ շարունակեց մօտենալ և երկու քայլ հեռու կանգ առաւ:

Ոսկանը մօտ եկաւ, քայլելիս կանչելով հեռուից.

—Փնև ձեզ ինչ ասեմ... Ադա, բաս ընդեղ հերիք չէր ձեզ, որ ըստեղ էլ սուփրա էք սարքել...

—Այ համեցէք, Ոսկան ամի, ձայնեց նրան Ջաւադը—կիսատ խօ պտի չթողայինք քէֆը:

—Բարև ձեզ. տրեց Վարդօն՝ մի քայլ ևս մօտեցած:

—Աստծու բարին. պատասխանեցին նրան մի քանիսները:

—Համեցիր, Վարդօ. դարձաւ նրան երէցվոխը—
համեցիր կողքիս եկ, մէկ ստաքան զինի անուշ արա...

—Չէ, շնորհակալ եմ, ասաց Վարդօն տեղիցը չշարժուելով և կարմրած—Ոսկանի հետ էինք... Ասաց մէկ գնանք... թէ դու մնալու ես, ես մենակ գնամ, Ոսկան:

—Ո՛ւր ես շտապում, այ տղայ, կանչեց Ոսկանը—
կաց մէկ ստաքան զինի խմեք ու միասին պատվօղով քեզ էլ կը տանենք:

—Մթնով կը մնամ...

Միւս գիւղացիների սառը վերաբերմունքը, Ջաւադի լիբբ ծիծաղն ու ակնարկները սրան-նրան՝ բարկա-

ցրին ինձ: Ճանաչում էլ էի Վարդօին. իսկոյն մօտ զընացի, բարևեցի և սկսեցի հետը խօսել:

—Մանօթացէք. ներկայացրի նրան հիւրերիս:

—Աղա՛, կանչեց այդ միջոցին Ոսկանը իր խրոխտ ձայնով—դորդ որ դուզանցի ենք հա՛... Կէսօրից առաջ գործներդ պրծել, հրէս իրիկույ ա դառնում, հլա դեղն էլ չէք հասել:

—Եանի դիփ մէկ չի. արեց Ջաքարը—օրը կորսում՞ ա...

—Բաս սո՛ւղիէն ուր ա, սո՛:

—Հարբած էր, քարափի տակը տանրան, որ հով տեղում մի լաւ քնի... ծաղրեց Ջաւադը—համ էլ մի քիչ շատ պինտ էր խումփացնում...

—Փնւ ես ձեր... ծիծաղեց Ոսկանը—սկի տեհայ ոչ որ էդ շան տղէն օյաղ հալով դեղ մտնի...

Վարդօն, կիսովին ականջը մեղ, աշխատում էր լսել նաև դուզանցիներին: Կցկտուր պատասխաններ էր տալիս, զգալի կերպով նեղում էր:

Հիւրերիցս Յակոբը թողել էր քէֆ անողներին և անդունդի ծայրից կռացած՝ հիացմունքով նայում էր դէպի խորքը, իսկ Գէորգը զննում էր նոր դէմքերը, մանաւանդ Վարդօին.

Ձննելու էլ դէմք էր այդ: Միջահասակ յիսնամեայ գիւղացի, թէև նոյն կոշա դիմագծերը, արևակէզ դէմքն ունէր, բայց բաւական զանազանւում էր միւսներից:

Հագել էր քաղաքացու նման. ամեն ինչ հնամաշ էր նրա վրայ.—սկսած գլխի «կարտուզից» որ գունագուրկ էր և տրորուած—մինչև կարկտաններով լի եւրոպական կօշիկները:

Անընդհատ ծխում էր, մուշտուկով պապիրոսը միշտ երկու դեղնած մատերի մէջ, ծուխը միշտ հաստ բխելի կարմրած ծայրերին, ձեռքն էլ տարօրինակ կերպով դողդողալիս:

Կարծես քնից նոր էր վեր կացել. մի տեսակ ուռած կոպերով ու խամրած հայեացքով աչքեր ունէր:

Ուրիշ կերպ չէի տեսել նրան: Ժպտելիս՝ տխուր ծալքեր էին կազմուում աչքերի անկիւններում և այտերի մազոտ ցցուածքներն աւելի շեշտուում:

Թւում էր որ սաստիկ խմող պէտք է լինէր, եթէ ոչ արդէն ակոսողիք: Նշանները պարզ էին. ձայնը խռպոտ, ձեռքերը դողողջուն, դեղնութեամբ նշմարներ, մրսկանութեան երևոյթ և կաշուի մի տեսակ յատկանշական իւղոտ փայլ:

Ակնարկը մեզնից—դուզանցոց, նրանցից դէպի մեզ, անընդհատ ծխում էր, շատ կարճ, ակամայ պատասխաններ տալիս և փոքրիկ, անցողակի ժպիտներ կազմում դէմքի վրայ:

—Դո՛ւք էլ սրանց հետ էք. հարցրեց նա մեզ՝ քիչ յետոյ:

—Ո՛չ, մենք ճանապարհին պատահեցինք և եկել ենք ձորն իջնելու:

—Այո՛... աչքերը փայլեցին—իսկ ինչո՞ւ չէք իջնում. չէ՞ որ յետոյ ուշ կը մնաք:

—Ի հարկէ, արեց Գէորգը—գնանք իջնենք. ի՞նչ ենք այս մարդկանցը կպել. Յակովբն էլ անա անհամբերութիւնից կարծես ուզում է իրան ձորը շարտել:

—Գնանք, ասաց Վարդօն—ես էլ կը գամ ձեզ հետ:

—Համեցէք, և եթէ կուզէք՝ մեր կառքովը ձեզ մինչև Ծաղկասար էլ կը տանենք... այնպէս չէ՞, դարձայ ես Գէորգին:

—Լսւ, ասաց Գէորգը—երեք հոգի ենք, թող չորս լինենք:

—Շնորհակալ եմ...արեց Վարդօն—գնանք ուրեմն: Շարժուեցինք տեղներիցս:

—Է՞դ ուր բարով, պ. Երուանդ, ձայնեց Խովերան:

—Ձորը:

—Հա՛... գնացէք, ընչի՞ չէ...

—Դո՛ւ էլ ես գնում, Վարդօ. հարցրեց Ոսկանը:

—Այո, պատասխանեցի ես նրա փոխարէն—մենք

միասին կիջնենք, յետոյ մեր կառքով նրան իրա գիւղը կը տանենք...

—Հ'ըմ... լմ...

—Ինչ որ ա... արեց քեօխման, որ նստել էր—երթաք բարով... ամա լմ պրծար, Վարդօ... գնա, գնա, քեզ հետ ուրիշ վախդ կը տեսնուենք:

Վարդօն նայեց նրան, մեղաւորի նման ժպտեց ու հետևեց մեզ: Իսկ Զաւաղը մի մեծ քրքիչ արձակեց և ձայնեց.

—Կարդացւորները գնացին...

Սուանց պատասխան տալու՝ քայլեցինք դէպի ձորաբերանը և ձայն տուինք Յակովբին:

Ու երբ ուզում էինք իջնել, լսեցի դարձեալ կաղիկի ձայնը, որ կանչում էր մեզ.

—Ըստեղ մտիկ տուէք, պ. Նրուանդ, թէ սուգին ուստ գաք, ասէք թող գայ, էս ա գնալու ենք ենք...

Դարձայ, նայեցի նրան բարկութեամբ և չկարողացայ զսպել ինձ.

—Ձեր աղբը ինքներդ ժողովեցէք, գոչեցի զայրոյթով:

—Ի՞նչ...

—Սկի, ոչինչ... շտապեց մէջ ընկնել Վարդօն. յետոյ թեա սեղմեց, նշանով արաւ լուելու և չորսս էլ նեղ արահետով իջանք դէպի ձորը:

Դուզանցիք անհետացան այլևս մեր աչքերից:

IV

Քանի իջնում էինք, գետի կարկաչն աւելի հնչուն, ժայռերն աւելի լարծուն, կանաչն աւելի առատ ու թարմ և արահետն աւելի դժուարանցանելի էր դառնում: Դիմացի կնձռոտ, կարծես արհեստական կերպով կերտուած լեռը ճնշող, հսկայ մեծութիւն էր ստանում՝ կուացած անդունդի վրայ:

Մշտապէս ստուերալից անկիւններում, ժայռերի

ձեղքերից անընդհատ կաթկթող ջրերի տակ, մագերի նման փռուած ու կախուած՝ աճել էին գիշութիւնով ուռճացող բոյսերի թփեր. խոշոր ապառաժներ լզուած ջրերից՝ սահել-հասնել էին ուզում գետակին և աջ ու ձախ, անվերջ ու ահաւոր խորութեամբ՝ ձգում էին գլուխ պտտեցնող անդունդներ...

Շատ չնչին, շատ փոքրիկ էինք երևում մենք բնութեան այդ վայրենի հսկայութեան առաջ: Մէն-մի քարն այդտեղ մեծ էր մեզնից, ամեն մի թուփը աւելի խոշոր:

Եւ այդ բոլորը—խիճ, քար, ապառաժ ու թուփ միահամուռ ձգտում էին իջնել—հոսել ուղէպի խորքը, ներքևում արշաւող փրփրալից գետակին, որ գալարւում էր քարոտ անկողնի վրայ, ոստումներ գործում...

Գուցէ տասներորդ անգամը լինէր իջնելս այդտեղ, բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ փոփոխութիւններ էի նկատում շուրջը: Բուսականութիւնը աւելի առատ էր դարձել և ճոխացել.—վայրենի շուշանները ծաղկել էին իրանց լայն ու լեզուաձև տերևների մէջ. վարդենին սպիտակ վարդերով պճնուել, դեղին ծաղիկների փնջերը երկարացել՝ դէպի մեզ էին կռանում, երկցուկները անհամար քանակութեամբ, խոշոր և պարարտ՝ դրաւել էին խորշեր ու ծերպեր, իսկ երեք-չորս նոր ջրվէժներ՝ ոստիւններով գահավիժում էին ժայռերն ի վար, պայթում քարերի վրայ, ջրի փոշի ցանում ամեն ուղղութեամբ:

—Բայց սա հրաշալիք է... ձայնում էր Յակովբը:

—Վայրենի, կրքոտ և արբեցուցիչ է՝ ինչպէս զընչուհի. աւելացնում էր Գէորգը:

Իսկ Վարդօս գլխարկը ձեռքին, գլուխը կախ և քիչ կթոտելով իջնում էր լուութեամբ:

Արահետը ոլորապտոյտ էր՝ երբեմն ժայռերի միջով, նեղ, հազիւ մի ոտնաչափ, իսկ յաճախ այնքան մօտ քերում էր անդունդի ափը, որ ստիպուած էինք կառչել քարերի և թփերի: Ոստնում էինք ջրերից, մագըլ-

ցում կամ սահում և երբ քրտնաթոր՝ հասել էինք հոսանում խիճերի դաշտին, կանգ առինք գետից յիսուն քայլ վեր—համեմատաբար տափարակ մի տեղ ու նրստեցինք հանգչելու:

Վարդուն միշտ լուռ՝ նստարան շինեց մի մեծ քար, Յակովբը ցցուեց սուր ապառաժի գլխին, Գէորգը փրուուեց խիճերի վրայ, իսկ ես մնացի կանգնած:

—Դուք չյոգնեցիք. ասացի գիւղացուն դառնալով:

—Ո՛չ, խօսեց նա—իջնելը չի յոգնեցնում... բարձրանալը հոգիս է հանում...

—Այդպէս է, փիլիսոփայեց Յակովբը—իջնելը միշտ հեշտ է. բարձրանալն է դժուար...

—Հը՛մ... արեց Վարդուն և ծխախոտի տուփը հանեց—իջնելը, այն, հեշտ է, բայց մէկ էլ տեսար տեղն ու տեղը մնացիր... և այն մնալն է որ կը մնաս...

Ու սկսեց պապիրոս շինել՝ կուսցած տուփի վրայ:

—Ձեզ համար դուցէ, առարկեց Գէորգը—շատ էլ առողջ մարդ չէք երևում, թէև գիւղացիք էք:

—Հիւանդ չեմ, խօսեց Վարդուն—շունչս չի բաւականանում:

—Եւ ձեռքերդ ու դուցէ ոտքերդ էլ դողում են:

—Ոտքերս քիչ, իսկ ձեռքերս՝ միշտ... Խմելուց է:

—Կասկածում էի... ուրեմն խմող էք դուք:

—Այո, արաւ Վարդուն պապիրոսը վառելով—օղի շատ եմ խմում:

—Լաւ չէ, բարոյախօսեց Յակովբը:

—Գիտեմ, ժպտեց գիւղացին—բայց ճանն ինչ... խմում եմ:

—Ինչո՞ւ ուրեմն մերժեցիք, երբ վերևում գիւղացիք առաջարկեցին ձեզ օղի, հարցրի ես:

—Ձկամեցայ: Նրանց հետ խմելը չարժէ... Միշտ մենակ եմ խմում. ոչ ոքի հետ...

—Եւ շատ:

—Շատ... Ուրիշների հետ, եթէ պատահի, գուեն՝ միայն մի ըլմկա... Գիւղացոց հետ՝ երբէք. ընկեր չեն.

օղիդ են միայն խմում և հարբելուդ վրայ ծիծաղում... Սոհասարակ վատ են. եթէ շահ չունենան քեզնից—կամ կը ծաղրեն կամ կը վնասեն... Մի բաժակ օղիի համար քծնում են...

Կցկտուր, խուպիտ ձայնով խօսում էր նա՝ պապիրոսը երբեմն բերնին, երբեմն մատների մէջ: Ձէր նայում մեզ, այլ միշտ դիմացի գետին և լեռներին:

—Ձեր անունը Վարդօ է, դարձաւ նրան յանկարծ Գէորգը, որ սկսել էր աւելի հետաքրքրուել:

—Ո՛չ, Վարդան է... «մածուն ուտող» Վարդան:

—Մածուն ուտող, ծիծաղեց Յակովբը—և ինչո՞ւ այդ տիտղոսը. երևի մածուն շատ էք սիրում:

—Այո. միս սակաւ եմ ուտում:

—Դուք երևի սովորած էլ էք, ժպտեց Գէորգը—գիւղացիք ձեզ «կարդացւոր» կոչեցին:

—Ծաղրում էին... բայց ուսել եմ մի ժամանակ... Ներսիսեան դպրոցումն եմ եղել... Գիւղացիք չեն սիրում ուսածների:

—Այդ վատ է, որ ուսածներին սկսել են ծաղրել. նկատեցի ես—երևի շատ էք խմում և ձեր պատիւը իջեցնում...

—Ո՛չ, այդ չէ, ասաց Վարդօն—Ուրիշների մօտ ես չեմ հարբում... տանս միայն. խմում եմ և չեմ դուրս գալիս... խմում եմ ու կարդում, քնում... Այդ չէ: Ծաղրում են, որովհետև իրենց գործերը տեսնում եմ և... աւելի հասկանում եմ իրանց աղտերը... Տանել չեն կարող որ իրանց գիւղացին աւելի զարգացած լինի և մաքուր, որ իրանցից շատ աւելի աղքատ, գրեթէ անկուտի Վարդանը համարձակւում է աւելի բան հասկանալ ու դատել, որ նա էլ միւսների նման չէ քծնում, քեօխլի վրայ գոռում է և մասնակից չէ գծուծ գործերի...

—Ա՛յդպէս է, ասաց Գէորգը—քանի մարդ տգէտ է, այնքան հաճոյք է զգում իրանից հասկացողին ծաղլու առիթ գտնել:

—Այո՛... Քեօխլան բարկանում է, որ չէ կարող

ինձ էլ մտրակել, ծեծել... և դիմում է ծաղրի... գզիրը ծաղրում է... որովհետև ինձ հեռու եմ պահում նրանց կեղտոտ արարքներից և կամ ճշմարտութիւնն եմ ասում... Պրիստան էլ, երբ տեսնում է որ առանց օրէնքի ինձ հետ վարուել չէ կարող՝ ծաղրի է դիմում, ճգնում է ստորացնել ինձ, գիւղացոց առաջ պատիկացնել...

— Եւ ի հարկէ, ատում են ձեզ ամենքը:

— Ատում են... Ծաղրով, նոյն իսկ անտեսապէս ճգնում են «տրորել» ինձ... Եւ երբ խմում եմ—նրանց քէֆն է գալիս. սիրում են տեսնել «ուսումնականին» անասունի հայում, թուլացած, հարբած... Կուզենային գտնել ինձ փողոցի ցեխում տապալակելիս...

— Էլ ինչո՞ւ էք մեղադրում գիւղացոց, առարկեց Յակովբը—քանի որ ինքներդ էք ձեզ անասնացնում և ծաղրելի դարձնում... Յիրակի, ուսում առած հարբեցողից զգուելի բան չէ կարող լինել:

Վարդօն ժպտելով նրան նայեց մի րոպէ, թանձր ծուխով պատեց բխերն ու ասաց.

— Ձեմ մեղադրում... Բայց ասեմ ձեզ, որ նոյն արբեցողն էի նաև չորս տարի առաջ, երբ մեր վեց գիւղերի ստարշինան էի, տէրութեան պաշտօնեայ... մտրակը ձեռքիս, շղթան վզիս և միշտ հարբած, այն էլ փողոցներում, հրապարակում, դատ տեսնելիս... ու չէին ծաղրում. քծնում էին, գտնում որ «ուսումնական հարբեցողը» սկի էլ ծաղրելու չէր, այլ շատ պատկառելի, յարգանքի արժանի... Մի շուն ունէի—մինչև իսկ նրան էլ գգուում էին, յարգում... Ստրկական յատկութեան արդիւնք է. սերնդից-սերունդ մտրակի տակ ծնած՝ պիտի քծնեն զօրեղի առաջ, պիտի շողքորդեն, լքեն... Կապուած շունը միշտ հաշում է ազատ շան վրայ... Դուք տեսէ՛լ էք սարդի ոտայն...

— Շատ...

— Ուստայնը սարքած, թագնուած մի անկիւնում՝ սպասում է. անմեղ ճանճը բռնում է յանկարծ, շատ

դէս ու դէն խփւում, ճգնում է ազատուել... գոցէ և գոռում է, օգնութեան կանչում.. Եւ եթէ բան է, մի ուրիշ ազատ ճանճ լաի նրան և մտածի օգնութեան գալ —բռնւում է ինքն էլ և նրա բախտը ոչնչով չէ գանազանւում առաջինից... մի քիչ աւելի ուշ է ուտում, ծծւում...

—Այո, խօսեց Գէորգը—գիւղն է այդ... ցանցը և գիւղի ըմբոստը:

—Գիւղն է, պնդեց Վարդօն—ոչ միայն գիւղը, այլ ամբողջ երկիրը... Ցանց է, ոստայն... և սարդերը տողած, սարդերը գիշատիչ. ոչ մի անկիւն ազատ չէ... Ի՞նչ կարող է անել թէկուզ «ուսած, հասկացող» ճանճը... Աւելի շուտ կը բռնուի, աւելի ուշ կը ոչնչանայ, բայց նրա կտրած չնչին թելը նորից կը նորոգուի և ճանճերը կը բռնուեն, կը ծծուեն...

—Հասկանալի է, ասաց Յակովբը:

—Իսկ ուր ոստայն կայ, շարունակեց Վարդօն—այնտեղ կայ միմիայն ուտուող ճանճ... ծնուելուն պէս գիտէ նա որ ցանց կայ... Մնում է մի հնարք...—լինել քծնող, խորամանկ, խաբեբայ և գծուծ՝ սարտել կարողանալու համար թելերից և գոնէ քիչ աւելի ուշ ուտուելու համար... Անցեալ օրը մի գիրք էր ընկել ձեռքըս, կարդում էի... Շատ լաւ գիրք էր. Թիֆլիս էի գնացել՝ մի ծանօթ սուլաւ... Կարդում էի ու մտածում որ շատ լաւ կը լինէր, եթէ դարվինիզմով բացատրուէր մեր գիւղացու ներկայ յատկութիւնները...

—«Դարուկինիզմ» գիրքն էք կարդացել:

—Այո... լաւ, պարզ գրած գիրք է... և ճիշտ: Ինքս գիտել եմ շատ բան... Որոշ միջատներ՝ իրանց միջավայրի գոյնն են ունենում, որովհետև այդ գոյն ունեցողները միայն կարողանում են ազատուել սարդից... ներեցէք, առ հասարակ ուտողներից ուզեցի ասել...—և յառաջացնել իրանց նման սերունդ...

—Որոշ միջատներ էլ, աւելացրեց Գէորգը—տերև-

ների մէջ ապրելով՝ ստանում են տերևների նմանութիւն այնքան, որ զանազանել չի կարելի...

—Այո... շարունակեց Վարդօն—ապրում են և բազմանում միայն նրանք, որոնք նմանւում են իրանց շրջապատող տերևներին. այդպիսի ընտրականութիւն մի քանի սերունդից յետոյ՝ յառաջացնում է տերևաձև միջատների մի տեսակ և այդ նոր տեսակի միջատը կը զարմանայ, եթէ պատմես իրան, որ տերևների ձևից աւելի լաւ ձև կայ...

—Մեր երկրի գիւղացիներն էլ նոյն օրէնքին են ենթարկուել ուրեմն ձեր կարծիքով. հարցրեց Յակովբը:

—Նոյն... Ըմբոսաները թշուառ են, ապերժանիկ... նրանք այլանդակութիւններ են և շուտ են ուտում... Աւելի ուշ ուտուելը դառնում է իդէալ... Մտածել էի այդ բոլորի մասին, բայց բացատրել չէի կարողանում. գիրքը հասկացրեց:

—Բայց, ասացի ես—պատուեցէք ցանցը:

—Պատուե՛նք... Ժպտեց Վարդօն—ինչո՞ւ չէ... Բայց նախ հարկաւոր է որ ամենքը զգան թէ ցանցը նեղիչ է և թէ նրանից դուրս էլ կայ կեանք ու աւելի լաւ կեանք... Յետոյ, շատ էլ հեշտ չէ պատուելը. առաջին զգացողին սարդը իսկոյն կլանում է... Մի ճանճը ոչինչ անել չէ կարող. մի ըմբոստը, եթէ չփշրուի էլ, ինձ նման՝ օղի կը դիմի կամ ծաղրելի կը դառնայ... պէտք է ամենքը... իսկ այդ «ամենքը» ունենալ դիւրին չէ...

Ասաց, ուժգին կերպով փչեց մուշտուկի մէջ, պապիրոսի մնացորդը դուրս շարտեց ու ոտքի ելաւ:

—Չգնանք...

—Գնանք...

V

Շատերը, եթէ մտաբերեն, գուցէ յիշեն իրանց հետ պատահած այսպիսի մի երևոյթ:

Վիճում ես մէկի հետ. դիմացինդ պարզում է քեզ

իր հայեացքը որոշ խնդրի մասին և յաջողուում է համոզելու չափ փաստեր տալ: Զգում ես որ ճիշտ են ասածները, այնուամենայնիւ դեռ կասկածի մէջ ես, որովհետեւ իրական կեանքում նրա պատմած փաստերը անձամբ, քո՝ աչքերովը՝ չես տեսել:

Եւ անա չէ անցնում մի քանի օր, երբեմն իսկ մի քանի ժամ, որ դիպուածով, ներկայութեամբ հէնց քեզ հետ վիճող պարոնի—ականատես ես լինում նրա ասածը հաստատող ապացոյցին:

Սյրպէս օտարոտի մի պատահար էր անա, որ հաստատելու համար Վարդօի խօսքերը, դէմ առ դէմ տեղի ունեցաւ ձորագլխում, երբ այնտեղ վերադարձանք:

Պէտք է որ ժամը 6-ը լինէր, եթէ ոչ աւելի ուշ, երբ ձորիցն ելանք ու մտածեցինք զիւր գնալ:

Դուզանցինները չկային. գնացել էին: Հարթութեան վրայ մնացել էր միայն մեր սայլը: Սայլապանը պարզուած նրա մէջ՝ քնել էր զլուխը դրած մի երկար փայտի վրայ:

Զարթեցրի նրան:

—Վեր կաց, գնում ենք:

Ելաւ, աչքերը տրորեց ու իջաւ սայլից:

—Հա, եկնք, արեց նա—բա ընչի՞ էսքան ուշացաք... հրէս կը մի՞նի:

—Ոչինչ, լուսընկայ գիշերներ են. սանձերը կարգի դիր ու նստենք:

—Ղորդ ա, առարկեց նա մօտենալով ձիերին—ամա դէ շատ ուշ մնացինք է... Ողջ օրը կորսուաւ. ասի քիչ շուտ ետ գառնանք, բեալքի թէ մի-երկու սէլ խոտ էլա տուն տանեմ:

—Վնաս չունի, խօսեց Վարդօն—ուրիշ սէլ էլ ունիս. ախպէրդ հմի նրանով տարած կը լինի:

—Դո՛ւ էլ ես գալու Դուզան, ասաց սայլապանը խէթ-խէթ նրան նայելով:

—Ձէ, ասացի ևս—առաջ մէկ Ծաղկասար կիջնենք, յետոյ Դուզան կը բարձրանանք:

—էդ հնց կըլի, փոկերից մէկը ձեռքին՝ ինձ նայեց սայլապանը—էդ խօ ջլիս միթանը կը մնանք... Չէ, էդ մէկը սկի չի ըլի. ես Ծաղկասար չեմ գնալ:

—Տօ պրծիր է, ձայնեցի ես—մի բան էլ աւելի կը տանք հը... Մի մանէթ չի հախդ, Ծաղկասար գնա ու երկու մանէթ ստացիր:

—Ոհնց թէ մի մանէթ... գոչեց նա—ընչի՛, բաս մի մանէթ էք տալու:

—Իհնչ է, զարմացայ ես—մեր Սիսակ ծառան քեզ հետ չի՞ խօսել այդ մասին. չէ՞ որ սովորաբար հէնց մի մանէթ է և ոչ աւելի:

—Ղորդ ա, խօսել ա... կմկմաց գիւղացին—ամա դէ մի մանէթ...

—Չէիր ուզում՝ թող չլծէիր... պրծիր, պրծիր, խօսալու ժամանակ չկայ...

Գիւղացին պահ մի լուռ, առանց մեզ նայելու՝ սանձերը կարգի դրաւ, յետոյ յանկարծ դուրս եկաւ ձիերի միջից, անցաւ սայլի միւս կողմը, վճռականօրէն ինձ նայեց ու ասաց.

—Չէ, պարոն Երուանդ, էդ ըլելու բան չի. ես Ծաղկասար գնացողը չեմ՝ էս մէկ, համ էլ երեք մանէթից պակաս չեմ առնի՝ էս քեզ վրայ երկու...

Ես և հիւրերս միմեանց նայեցինք զարմացած:

—Այ տղայ, դու խօ չե՞ս գժուել, ես հարբած խօ չեմ. գայրացաւ Յակովբը—հէնց մեզ մօտ էր որ Սիսակը եկաւ ու ասաց թէ մի մանէթով է խօսել հետդ...

—Ղորդ ա... բան չեմ ասուժ, մի մանէթ խօսեց...

ամա դէ ես էլ ասի որ երեք կառնեմ...

—է՛, որ ասիր՝ ինչո՞ւ եկար կամ ինչո՞ւ գնի մասին մեզ հետ նախ չվերջացրիր ու յետոյ բէրէիր. հը...

—Դէ հնց անեմ ես... ասի աղա մարդիկ են...

—Յիմար մի լինիլ, միջամտեցի ես—միշտ գնացել եկել եմ, երբեմն 4—5 հոգով, միւսն և մութը մնացել ենք ու միշտ էլ միայն մէկ ըուբլի եմ տուել... Որոշուած զինն էլ դա է...

—Այդպէս է, հաստատեց վարդօն—տաքսան ¹⁾ մի մանէթ ա:

—Ի՞նչն ա մէկ մանէթ, բացազանչեց գիւղացին՝ գայրացած դէպի նա դառնալով—եանի ձեր ծաղկասարեցին կը տանէր հա՛... թէ ընէնց՝ փչում ես...

Ապա յամառ ու խիստ ինձ նայեց ու ասաց.

—Երեք մանէթից պակաս չի ըլի, պ. Երուանդ. թէ Ծաղկասար էլ գնալու ըլէք՝ չորս մանէթ... կուգէք՝ կը տանեմ, չէք ուղի, հրէն ձեր շէյքը, ²⁾ սէլիցը վեր դրէք՝ ես գնամ...

Այլ ևս համբերել անհնար էր. չափազանց յանդուգըն էր դառնում գիւղացին: Անմիջապէս կորգեցի վարդը մեր պայուսակն ու գորգը և ասացի.

—Լաւ. դէ հիմի գնա՛. մինչև գիւղը չորս վերստ է մնացել. ինչպէս լինի կը գանք, բայց դու այլևս կոպէկ չես ստանալ ինձնից:

Սայլապանը ելաւ սայլի վրայ, խարազանը ձեռքն առաւ, սանձերը ժողովեց ու մի տեսակ համարձակ ժպիտ դէմքին՝ կանչեց.

—Կը ստանամ... արխէյին, ³⁾ կաց...

—Գնա տեսնենք ի՞նչպէս կը ստանաս... Դատի դիմիր եթէ կ'ուզես:

—Ինչի՞ դատաստան. ասաց նա—իմ դատաստանը հրէս սյ, իմ պլէտն ¹⁾ ա...

—Ինչպէս...

—Ընէնց... իմ դատաստանը ես իմ ձեռքովս կը տեսնամ... հրէս սյ, պլէտս սաղ կենայ...

Արիւնը գլուխս խփեց. վարկենական զարմանքից յետոյ, չգիտեմ ինչպէս եղաւ—ոտնեցի դէպի նա, բռնեցի ցոյց տուած «պլէտի» ծայրից, քաշ տուի խլեցի և նրանով ուժգնութեամբ սկսեցի հարուածներ տեղալ գլխին:

1) Որողուած գինը. 2) իրեղէնները. 3) միամիտ. 1) խարազան:

Մոսկւան ու զարմանքի մի ճիշ դուրս թուա գիւղացու բերնից. ճգնեց սանձերը ժողովել, բայց շփոթուեց. և որովհետև ես շարունակում էի հարուածել՝ ցած թուա սայլից:

Կարծեցի պիտի պաշտպանութեան դիմէր, սայլի մէջ դրած ցուպը վերցնէր, վրաս յարձակուէր...

Եյնուամենայնիւ ետ չքաշուեցի:

Այստեղ սակայն Գէորգը, որ ապշած կեցել էր, վարակուեց ինձանից. անմիջապէս կորգեց ձեռքիցս խարազանը, ընկաւ գիւղացու վրայ—և տուր թէ կը տաս...

—Շան որդի, սկսեց նա հարուածները հետ—դու համարձակում ես պէտով սպաննալ, հմ... սպասիր մէկ քեզ սատկացնեմ...

—Ե՛ս, ե՛ս... սկսեց ետ-ետ քաշուել գիւղացին—ե՛ս... սպանելու էք ինձ...

—Պիտի սպանեմ... ահա քեզ... ահա էլի...

Եւ ո՛չ իսկ մտածեց մի ըոպէ ձեռքը ցուպին տանել գիւղացին. այլ մէկէն մէջքը դարձրեց ու ճշալով սկսեց փախչել դէպի խճուղին. Գէորգը նրա ետևից՝ խարազանը ճօճելով օդի մէջ...

Ո՛չ միայն փախչում էր սայլապանը, այլ և կանչում էր.

—Փիէ... տօ սպանելու էք... ախր ես ի՛նչ արի է... տօ ես դալմիթ արի որ մի բան ասի...

Գէորգը հասել էր ետևից, հայհոյում էր ու զարնում:

—Վայ, վայ... սկսեց աղաչել գիւղացին:

Կանգ էր առել ու կծկուելով, գալարուելով՝ ուտում էր հարուածները, առանց ձեռք իսկ շարժելու զարնողի դէմ:

—Վայ, վայ... գոռում էր նա—ե՛ս մեղայ Աստծոյ, աղա՛ս... խիպէր ինչ կուզէք տուէք... տանեմ, տանեմ, էլ ո՛ւր ես խփում... կանչ հալա...

—Դո՛ւ անպիտան, դո՛ւ սողուն... կանչում էր Գէ-

որզը զարնելով—էս ըոպէիս մեր պայուսակը մէջ դիր ու մեզ գիւղը տար թէ չէ...

—Տօ տանեմ, տանեմ էլի... ես'...

Յետոյ յանկարծ վարմունքը փոխեց, կծկուեց, աղաչաւոր, սարկական ժպիտ կազմեց դէմքի վրայ ու ասաց.

—Դէ որ ուզում ես սպանել, ըհա՛, խփիւր... դուքո ինսա՛ֆը...

Այստեղ մենք միջամտեցինք, Գէորգն էլ իջեցրեց խարազանը:

—Թող, Գէորգ. ասացի ես—թող, շա՛տ զզուելի է:

—Եւ ինչպէ՛ս զզուելի... կանչեց նա խարազանը հեռու նետելով—քիչ է մնում խեղդեմ, սատկացնեմ այս սողունին... փոխանակ՝ ճանկերով լինի, ատամներով լինի՝ ինձ բղկտելու, դողում է այս բարակ, թելի նմանող քոսոտ խարազանի առաջ. փախչում է, կծկում, աղերսում. քիչ է մնում ոտներս լզի... Ո՛ւ ես քո կերած հացին ու ծածկած փափախին... Մօտ արի, շան որդի, լաչա՛կ ծածկեմ գլխիդ, լաչա՛կ...

—Ընչի՞, աղա՛. կանչեց գիւղացին հեռուից—մօտ չեմ գայ, էլի կը ծեծես...

—Արի ասում եմ է... արի սայլը բարձրացի, թէ չէ ողջ մարմինդ կը շարդեմ...

Գիւղացին մի քայլ առաջ եկաւ քծնող ժպիտը դէմքին, կանգ առաւ խոնարհ՝ և ասաց.

—Եանի ի՛նչ էի արել, աղա՛, որ էդքան ծեծեցիր:

—Հալա էլի կը ծեծեմ, սողուն. կանչեց նրա վրայ Գէորգը:

—Տօ, դու մարդ ես, ջիզար ունիս... սօ դու սկի ամօթ ես սիրտ չունես... Հ՞ը, անի՛ծած, համ պլէտ ես ցոյց տալիս, համ էլ էդքան վախկոտ ես...

—Դէ բա ի՛նչ անեմ, աղա՛, ես կարող եմ ձեզ պէս աղաների հախիցը գալ... Կերթաք ստարշինի, պրիստաւի ու... էլ ողջ տարին ջառմա՛¹⁾ քաշելուց չեմ պրծնի...

¹⁾ Տուգանք:

Յետոյ մօտ զնաց սայլին, արագութեամբ մեր իրեղէնները դարսեց տեղը, խոնարհաբար հրաւիրեց մեզ նստելու և երբ սանձերն էր ժողովում քշելու համար, քծնող ժպիտը դէմքին ինձ դարձաւ ու ասաց.

— Դէ աղա, էն որ ծեծեցիք էլ, երկու մանէթը կը տո՞ք, չէ... Թէ Մարկասար կուզէք՝ իրեքը...

— Լաւ, լա՛ւ, քշէր...

— Քշիր ու ձէնդ կտրիր, շա՛ն տղայ. բարկացաւ Գէորգը— հիմա աւելի փիւս կը ծեծեմ թէ խօսել ես:

— Եա՛... արեց գիւղացին— դէ քշում եմ էլի, էլ ինչի՞ ես ուշուց տալիս, եա թէ չէ՛ ծեծել ուզում:

— Քեզ նման սողունի ոսկորներն էլ որ փշրես՝ դեռ քիչ է:

Գիւղացին Վարդօին նայեց զարմացած ու հարցական. կարծես կամենում էր հարցնել նրան թէ՛ «ինչո՞ւ է բարկանում այլեա այդ քաղաքացին»:

Վարդօն, որ մինչև այդ լուռ, իսկ կառք նստելուց յետոյ գլուխը քաշ՝ պապիրոս շինել— վառում էր, նայեց Գէորգին ու ասաց.

— Ձի հասկանալ ձեզ, պարոն, իզուր էք փորձում իր ստրկային զգացմունքները զգուելի հանդիսանցնել իրեն իսկ... Քանի բարկանում էք— նա ա՛յնքան աւելի չի հասկանում ձեզ...

— Իսկ բնազդ, ինքնապաշտպանութեան, անձնասիրութիւն բնազդ անգամ չունի, գոչեց Յակովբը— չէ՞ որ ամեն անասուն ունի դրանցից:

Եւ մինչ կառքը սրանում էր ու խճուղին ելնում, Վարդօն առանց ժպտելու, ծուխը բեխերի մէջ՝ պատասխանեց.

— Այո, ունի... Բայց ինքնապաշտպանութեան բընազդները տեսակ-տեսակ են լինում: Փախչել, կծկուել-թագնուել՝ հարուածից խուսափելու համար, աղաչել, լալ... Իրանք էլ ինքնապաշտպանութեան բնազդներ են: Ստրկական ինքնապաշտպանութեան բնազդներն են մեր մէջ զարգանում միայն. իսկ անձնասիրութիւն բառը

անյայտ գաղափար է այս կողմերում... Ամեն ինչ միաբանած՝ ժողովրդին կըթում են այդպէս...

—Անասունը գոնէ կծում է, մոմուաց Գէորգը— ինչքան էլ ուժեղի պատահի, նախ կծում է, յետոյ մեռնում... Մեղուն իր մահուան գնով՝ պաշտպանում է իր հասարակութեանը...

—Ճիշտ է, շարունակեց Վարդօն—Մենք էլ կծել գիտենք... մեզինքն թոյլերին, մէկմէկու կծել... Մարդը կարծում էր թէ յոխորտալով կը յաջողուի կողոպտել ձեզ. այժմ քծնում է, որովհետև զգաց որ այդ ձեն աւելի նպաստաւոր է... Ու յաջողուեց. հաւաստի եմ որ կը տաք իր նրան ուղածին չափ. ծեծեցիք և դա ճնշում է այժմ ձեզ. խղճահարութիւնից՝ ուղածը պիտի տաք...

—Իսկ որ ծեծ կերաւ...

—Ոչինչ, սովոր է մեր մէջքը. ժպտեց դառնութեամբ Վարդօն—կոշտեր են գոյացել մեր մէջքերի վըրայ այնպէս, ինչպէս ոտքերի մասներին՝ նեղ կօշիկների մէջ ճնշուած... Ծեծը, բարկութիւն գրգռելու համար, նախ հարկաւոր է որ կաշին նուրբ, զգայուն լինի և կոշտերից ազատ. իսկ կոշտերից ազատուելու համար...

—Ազատուելու համար... արի ես.

—Միայն մի հնարք կայ... լայն կօշիկներ հագնել, նեղ կօշիկը ընդ միշտ դէն շարտել... Այո, լայն, շատ լայն...

Վ. Փափազեան